


ՇՏԵՄԵՐԵՆ

ՊԻՏՄՆԻ ԳԻՏԵԼԿԵՆՑ



Ս֊ Յ֊Լ֊

Լս կատաղի անասունը՝ որուն պատկերը կը դնենք հոս, շատ ատեն ֆարիզու փակարանը պահուեցաւ. բայց ՚ի գնին գացողներէն քիչ մարդիկ կրցան տեսնել զանկայ. ու աս պատկերը քաջոյն ալ շատ յաջողակութիւն ունենալով իր արհեստին մէջը, և այնպիսի վարպետներէն ըլլալով որ սորված է որ և իցէ բանին նմանը գըծադրելու, թէ և աչքին առջևը չըլլայ ան, մեծ դժուարութեամբ քանի մը անգամ տեսնելով զանկայ, կրցաւ անոր ճիշտ պատկերը նկարելու:

Յովազը՝ իր վայրենի բնութեանը հետ սաստիկ երկչոտութիւն մը ունենալով, գրեթէ միշտ իր փակարանին մութ անկիւնը կերթայ կրկնկի, անանկ որ ինքն ալ սնըլլալով ուրիշ բան չտեսնուիր հոն, բայց միայն իր աչուրները որ կրակի պէս կրփայլեն: Երբ որ իր պահապանը երկրթէ զաւազանով մը կը զբոսնէ զանկայ որ ելն անկից, կամաց կամաց յառաջ կուգայ վեղը երկնցունելով բերանը բաց, ոտուը

ները ծուած ու փորը գրեթէ դետինը բսելով, ճիշդ օձի մը պէս որ կըսողայ: Եւ ինչպէս որ ինքզինքը կը պահէ չուղէր երևնալ, ասանկ ալ ձայն չհաներ և չմրմուար ոչ իր պահապանին դէմ որ գաւազանով կը սպառնայ անոր, և ոչ ՚ի գնին եկողին՝ ուրուն նայուածքը կը կատարեցունէ զինքը. հապա իր վախը և իր բարկութիւնը կը յայտնէ միայն անանկ ձայն մը հանելով որ հազիւ թէ կը լսուի, ինչպէս որ կընէ կատուն՝ երբ որ շուն մը կը պատրաստուի իր վրան յարձակուելու:

Աս յովազը՝ գեղացի նաւապետին մէկը ծախու աւած էր ճապա կողիին մէջ. ու Հնդկաստանի հասարակ յովազներէն աւսով միայն կը տարբերի՝ որ անոնց մորթին դոյնը դեղին է սև և վարդի ձև բծերով. խակ ասոր մորթը թխագոյն՝ և վրայի բծերը սև են. անանկ որ աւանց ուշադրութեան նայողին միակերպ սև կերևայ: Բայց թէ որ իր փակարանին մուտք տեղէն դուրս ելլէ նէ, ան ատենը կը տեսնուի իր մորթին վրայի գեղեցիկ բծերը:

Օգտելի-ցել Ժամացոյց:

Տիկինին մէկը որ սովորութիւն ունէր աւաւտաները շատ ուշ ելլելու անկողինէն, մէկ օր մը միտքը դուրս որ ալ անկից ետքը խիստ կանուխ ելլէ որ տանը մէջն գործքերուն աղէկ հոգ տանի: Եւ որպէս զի աղէկ մը ապահով ըլլայ որ իր ուզած ատենէն աւելի քնացած չմնայ, գնաց զարթուցիչ ժամացոյց մը գնոյ աւաւ որ անոր շաւաջիւնը արշաբոյսը ծագելուն պէս նշան տայ իրեն անկողինէն ելլելու: Հետևեալ աւաւտունը հաւատարիմ ժամացոյցը իր պաշտօնը կատարեց. անանկ աղաղակ մը հանեց որ խիստ խորունկ քնացող մկները անգամ չէին կրնար դիմանալ, անշուշտ պիտի արթննային: Աս բարի դիտաւորութիւնը ունեցող տիկինը յանկարծ արթնցաւ բունէն, ու անմիջապէս ելաւ անկողինէն, և բոլոր ան օրը՝ ուրախ և ժիր վարմունք մը ունեցաւ, ամէն բան ալ աւելի բարեկարգութեամբ աւաւջ գնաց. վեց շաբաթի չափ ատանկ գնաց. բայց ետքը աւելի անհոգ բնութիւն մը ստացաւ աս տիկինը. նախ սկսաւ այնքան բանի տեղ չըլ-

նել ժամացոյցին ձայնը. ետքը՝ փոխանակ շուտ մը ելլելու անկողինէն, միւս կողմը դարձաւ. վերջապէս ուղեց փորձել թէ երկրորդ քուն մըն ալ քաջելու ըլլայ նէ աւջինին պէս քաղցր պիտի ըլլայ արդեօք: Հայտնի է թէ աս վարմունքը ինչ վախճան պիտի ունենար: Երբոր բարեմիտ տիկինը սովորեցաւ որ ալ հոգ չտանի իր զարթուցիչ ժամացոյցին շաւաջմանը հնազանդելու, ալ այնուհետև սկսաւ չլսել անոր ձայնը. ժամացոյցը փուճ տեղը շաւաջիւն կը հանէր. անոր զղզղիւնը՝ որ սենեակին ապակիները կը զողացունէր, տիկինին աչուրները անգամ բանալ տալու զօրութիւն չունէր: Միևնոյն բան էր զարթուցիչ ժամացոյց ունենալ կամ ոչ: Աւստի այսպէս ան ժամացոյցը ծախու աւանելը բոլորովին պարապ եղաւ:

Մարդուս խղճմտանքն ալ աս ժամացոյցին կընմանի: Թէ որ հնազանդիմք մեր խղճմտանքի ձայնին, անիկայ շարունակ կը մնացունէ և կը զրդէ մեզ. բայց թէ որ չուզենք անոր ձայնը լսել և անոր տուած խորհուրդներուն հնազանդիլ, անիկայ կը սկսի շատ քիչ անգամ խորհուրդ տալ մեզի և աւելի ցած ձայնիւ, մինչև որ իր ազդեցութիւնները՝ բոլորովին անիմանալի կը լան մեզի. Լսող լէ որ անոր յայնին իր լէ՛, որ Լստուծոյ ձայնին արձագանքն է, սիրտերնիդ մի ամուրցունէք: ԼԵՐ. Դ. 7:

Ղշմարտութեան հակառակորդներուն Խօսք Եր:

Ստուծոյ Խօսքին համար բտուած է թէ չօգիին սուրն է. (ԼԵՒ. Դ. 17.) Ըսել է թէ՛ չօգիին Սուրբ ինչ որ կընէ սրբտին մէջ՝ Խօսքին միջոցովը կընէ: Մեղաւորները փրկուելու համար պարտին չօգիէն ծնանիլ. (ՀՅՈՒՆ. Դ. 5.) Բայց պետոս աւաքեալ կը սորվեցունէ թէ մենք նորէն ծնած եմք չէ թէ ապականացու սերմէն, հապա անապականացուէն՝ Լստուծոյ կինդանի ու յաւիտենական Խօսքովը. (ՎՊԵՄ. Դ. 23.) ասկէց յայտնի կերևայ որ չօգիին Սուրբ վերստին ծնունդը կընէր գործէ միայն Լստուծոյ Խօսքին միջոցովը: Սուրբ չօգիէն սրբուելը ճշմարտութեան հաւատաւով կը ըլլայ, (ԻՌԻՒ. Դ. 12.) փրկեցին մերոյ Հիսուսի աղօթքին համեմատ. «Սրբէ

անոնք քու ճշմարտութիւնովդ որ քու խօսքդ ճշմարտութիւն է՝ : Յո՛ւն . ժէ . 17 : Ըպա ուրեմն չոգին Սուրբ կրնեղգործէ Ըստուծոյ ճշմարտութիւնովք կամ խօսքովք . և թէ որ այսպէս է , ճշմարտ են աս հետեւեալ բաները :

1 . չոգին Սուրբ երբէք մէկու մը չյայտնէր կամ անկէց պահանջեր որ և իցէ բան , որ հակառակ է Ըստուծոյ խօսքին , կամ անոր մէջը պարունակուած չէ :

2 . Ըստուծոյ Բանին գիտութենէն զուրկ եղողները՝ հաւասարապէս զուրկ են իրենց սրտերուն վրայ չոգւոյն Սրբոյ ներգործութիւնը ունենալէն :

3 . Ըմէն մարդ ամենամեծ հարկաւորութիւն ունի աղէկ սորվելու Ըստուծոյ խօսքը , և Սողմոսերգուին պէս՝ զանիկայ իր սրտին մէջ պահելու : Սողմ . ճթթ . 11 :

4 . Սեր մեծ պարտաւորութիւնն է ձեռքերնուս եկածը ընելու , որպէս զն Ըստուծոյ խօսքին գիտութիւնը տարածուի մարդկային սեւին ամէն տեսակին մէջ :

5 . Ով որ կամ ինչ բան որ կըհակասի Ըստուծոյ խօսքին կամ անոր մարդոց մէջ տարածուելուն , կըհակառակի չոգւոյն Սրբոյ և մարդոց փրկութեանը :

Ընթէ՛ր Սրբոյն Օգոստինոսի :

Քեզի կաղաղակեմ , Ըստուած իմ , քեզի կաղաղակեմ , որ յայանեցիր թէ մօտ ես ան ամէնուն որ ճշմարտութեամբ քեզի կաղաղակեն* : Ըյո՛ւ , դուն ինքնդ ես ճշմարտութիւն . վասն որոյ քու գթութեանդ համար սորվեցուր ինձի այնպէս կատարել աս պաշտօնս ինչպէս որ արժան է . քանզի աւանց քեզի չեմ գիտեր թէ ինչպէս հաճոյ ըլլամ քեզի . և անոր համար իմ ամենախոնարհ և ջերմեւանդ աղօթքս աս է որ նոյն իսկ ճշմարտութիւնը ըլլայ իմ ուսուցիչս : Ըմէն գիտութիւն աւանց քեզի յիմարութիւն է , ու միայն քեզ ճանչնալը՝ ամէն գիտութեանց բովանդակութիւնը և կատարելութիւնն է : Ով ասն որոյ իմաստնացուր զեմ՝ սվ երկնային Իմաստութիւն , ու սորվեցուր ինձի քու օրէնքներդ . վասն զի բաջ գիտեմ թէ ան միայն երջանիկ է որն

* Սողմ . ճթ . 18 :

որ դուն քու օրէնքովդ կըխրատես և կը սորվեցունես* :

Իմ փափաքս քեզի աղաղակել է , ու սիկայ ճշմարտութեամբ ընել է . բայց ի՞նչ է ճշմարտութեամբ աղաղակել ճշմարտութեան , եթէ ոչ խօսիլ առ չայր՝ Որդիին միջնորդութեամբը : Ով չայր սուրբ , ճշմարտութիւնը քու Բանդ է . ու քու Ըւետարանիդ մէջ եղած բովանդակ բանիդ սկզբնաւորութիւնը մեզի կրտէ թէ Սկիզբէն էր Բանը : Ըյդ ճշմարտութեան Բանին միջնորդութիւնովք քեզի կաղաղակեմ՝ սվ իսկական և նախնական ճշմարտութիւն , ու կաղաչեմ որ ճշմարտութեամբ աւաջնորդուիմ , ու կատարելապէս զանիկայ սորվիմ :

Եւ արդ՛ ի՞նչ կրնայ աւելի բաղձալի ըլլալ , որչափ աղօթել Օնտոյն իր Սիւննին անունովք . կարեկցութեան շարժել չայրը իր սիրելի Որդոյն յիշատակութեամբը . զիջուցանել թագաւորին բարկութիւնը իր գերդաստանին Սիրելիովք , իր բոլոր տէրութեանը Դաւանգովք : Ըստնք այնպիսի զօրաւոր միջոցներ են՝ որ չարագործները կըզործածեն բանտէն ազատելու , գերիները ու կալանաւորները ազատութիւն ստանալու , դատապարտեալները թողութիւն գտնելու . մանաւանդ թէ բաւական զօրութիւն ունին ասոնք՝ ոչ միայն թողութեան համոզելու , այլ նաև սիրոյ և յաւաքաղիմութեան : Թագաւորին բարկութիւնը իսկոյն կըզիջանի , թէ որ յանցաւորները անանկ սիրելի ըլլան անոր որդոյն՝ որ անոր անունը ու իշխանութիւնը բանեցունելու կարող ըլլան . ու ծուռաները զիւրութեամբ կրնան ազատիլ ձեռքէն , թէ որ որդիքը իրենց գեղեցիկ սիրովք միջնորդութիւն ընեն անոնց համար : Ըս որովհետեւ աս ճամբաները այսպէս յաջող են երկրի վր , ինչո՛ւ նոյն բարի զօրութիւնը պիտի չունենան երկինքը : Պիտի աղաչեմ ամենակարող Չօր իր ամենակարող Որդոյն համար , որ իմ հողիս բանտէն հանէ , որ դոհուութիւն մատուցանեմ իր անունին † : Ըրձակէ՛ զեւ , Տէր , իմ մեղաց կապերէս , քու միակ և մշտնջենակից Որդւոյդ համար .

* Սողմ . շթ . 12 : † Սողմ . ճթ . 7 :

և քու փառացոյ ցանկարի և երկնային պատկերին և պայծառութեանը միջնորդութեամբ՝ որ հիմա քու աջ կողմդ նստած է, հաշտուէ՛ որդրմեղի և մեղաւանկարդ թըշուառականիս հետ . և փոխանակ ան մահուն՝ որ իմ ամբարշտութիւնս արժանաւորապէս ինձի կրտսաւանայ, յուսապատար և երջանիկ կենաց վերածէ զես ու բարձրացուր :

Յերաւի մի միայն աս միջնորդը կրնամ գործածել : Ա ան զի ո՛ւր պիտի փախչիմ, և որո՞ն իշխանութեանը պիտի ապաւինիմ չօր Մատուճոյ առջևը, թէ որ չեթամ անոր որ մեր մեղքերուն բաւութիւն է, որ և Մատուճոյ աջ կողմը նստած մեզի համար բարեխօսութիւն կրնէ* : Ա ան որոյ ասիկայ է իմ միջնորդս քու առջևդ, ո՞վ երկնաւոր չայր . ասիկայ է իմ քահանայապետս, որ կարօտ չէ օտար արիւնով սրբութիւն . այլ ինքը բաւութիւն գործեց՝ ու քու առջևդ ջնջ և մաքուր կրկանդնի իր արեանը դորութիւնովը, որով ինքը լուացուեցաւ մեզի համար† : Մսիկայ է ան սուրբ և անարամ՝ ընդունելի և կատարեալ պատարագը, որ անուշահոտ նուէր ընծայուեցաւ Մատուճոյ : Մսիկայ է սուրբ և անբիժ Վաւը՝ որ իր խոզողին առջևը անմըւունչ կեցաւ † . ու թէ և բամբասուեցաւ՝ և աստուհուեցաւ և իր երեսին թուք ընդունեց, բայց իր բերանը չբացաւ : Մսիկայ է ան արդարը որ մեղք չգործեց՝ այլ խոնարհեցաւ մեր մեղքերը կրելու, և իր ընդունած հարուածներովը մեր ապականեալ վէրքերը բժշկելու :

Մայէ՛ ուրեմն, ո՞վ բարեգութ չայր, նայէ՛ որդիներուն մէջ աս ամենալաւին և ամենասիրելին վրայ, որ իմ պատճառովս ամենալաւ և ամենաչար նախատինքներ կրեց : Ա՛վ ամենողորմ թաղաւոր երկնից, մտածէ՛ թէ ո՞վ է որ կրեց, և միանգամայն մտածէ՛ թէ որո՞ւ համար կրեց այսպիսի գառն բաներ : Մատուճ իմ՝ ասիկայ ան անբիժ Մանեղութիւնը չէ՞, որն որ՝ թէպէտ և քու որդիդ էր՝ հաճեցար չխնայել ճ, որ պէս զի քու ծառայ փրկէ || : Մսիկայ կենաց պատճառը և պարզեողը չէ՞, որ ոչխարի պէս մարթուելու տարուեցաւ ||, ու մինչև մահուն հնազանդելով՝ հաճեցաւ մեռնիլ խիստ աղետալի և անարդ կերպով : Ա՛վ Տէր, որ քու զարմանաքանջ խնատութեամբդ մարդկային փրկութեան բովան

դակ խորհուրդը ձեռացուցիր, կաղաչեմ՝ քեզնի, միտք աւ որ ասիկայ ան նոյն անձն է՝ որ թէպէտ և քեզնի ծնաւ, և քու ամենակարող զօրութեանդ մէջ քու նմանութիւնդ ունի, բայց դուն սահմանեցիր որ իմ տկարութեանս հաղորդ ըլլայ : Քու Մատուճային բնութիւնդ էր՝ որ Մարդկային բնութիւն զբեցաւ, ու իմ մարմնովս ՚ի խաչելու, և ամենասաստիկ մահուն կսկիծները քաշեց : Ա՛հ, այսպիսի խոնարհութեան և սիրոյ անձաւելի զէպքը հանապաղ քու աչքերուդ առջին ըլլայ : Տէս այդ սիրելի Որդին խաչին վրայ տարածուած : Տէս իր սրբազան ձեռքերը անմեղ արեամբ ներկուած, ու ներք ան մեղքերը որով իմ անօրէն ձեռքերս շարախեցան : Տէս իր մերկ կողը զժնդակ նիզակով խոցուած, ու լուս զիս ան աղբիւրին մէջ՝ որ հաւատոյ աջօք կր տեսնեմ թէ նոյն վէրքէն կրվաղէ : Տէս ան սայրասուր բեւեռներով ծակուած օրհնեալ ոտքերը՝ որ մեղաւորաց ճամբուն մէջ ամեննին չկեցան* այլ քու պատուիրանքներուդ շաւիղներուն մէջ քալեցին . ու հաստատէ իմ ընթացքս քու շաւիղներուդ մէջ †, և շնորհք տուր ինձի բոլոր չար ճամբաները ատելու, ու ճշմարտութեան և արդարութեան ճանապարհը ընտրելու : Կաղաչեմ՝ քեզի, ո՞վ թագաւոր սրբոյ, քու բոլոր սուրբերէդ աս Մանասուրբին և աս կարող փրկչին միջնորդութեամբը այնպէս պատրաստէ իմ սիրտս և իմ գործողութիւններս, որ նոյն հօգիովը միաւորիմ անոր հետ † որ չարհամարհեց նոյն մարմնով միաւորիլ ինձի հետ : Ակտուէ՛ ան գլուխը որ իր կուրծքին վրայ խոնարհեցաւ՝ ու մահուն ցաւերովը վերջին շունչը արձակեց, ու քու անմեղ Որդւոյդ մարդկութեան աս փորձը, թող ՚ի զուժ շարժէ գեթ՝ իմ ամենողորմ Ստեղծողս, իր թշուառական ստեղծուածին վրայ որդրմելու : Տէս իր այլ լազունեալ կուրծքը, իր արիւնաներկ կողերը, իր ծարուութեամբ պապակեալ աղիքները, իր մահուն թախկայեալ գեղեցիկ աչքերը, իր ընդամացեալ բազուկները, իր արիւնաթաթաւ արքայական գեմքը, իր ձգտեալ սրունքները, պատուական արեան վտակներով որդողուած իր ծակեալ ոտքերը : Մայէ՛, ո՞վ փառաւորեալ չայր, աս ամենասիրելի Որդւոյն, նայէ՛ աս Զախճախած ու խորտակած և փեռեկաւած մարմնոյ՝ վրայ, ու որդրմութեամբ յիշէ որ նոյն մարմինէն եմ ես : Ընդատապարտութիւնը՝ որ կրեց Մատուճն և Մարդ, բաւութիւն ըլլայ իր և քու նմանութեամբդ ըստեղծուած մարդուն :

* ԹՅՊՆ. Բ. 2 : ԳՅԲ. Է. 25, 27 : Թ. 11, 12 :
 † Մայ. ԺԴ. 7 : ԹՊԼԻ. Բ. 23, 24 :
 ‡ Լուս. Բ. 32 : ԳՅԲ. Դ. 13 : ԳՅԲ. Ը. 32 : ԴՊԼԻ. Բ. 8 :

* Ստղ. Թ. 1 : ԳՅԲ. ԺԷ. 5 : ԹՊԼԻ. Դ. 17 :

Հաղորդումն յնշաբախումնննն :

«Երկու ընդ զն յնշաբախումնննն» : Եւ յորնթ . ԺԿ . 23 :

Իբր թէ փրկիչն մեր աս խօսքովը կուղէր ըսել . Յիշէ թէ ես ո՛վ եմ և զուն ո՛վ ես . յիշէ որ ես բու փրկիչն եմ . յիշէ որ ես բու Վարդապետդ եմ . յիշէ իմ սէրս , յիշէ բու պարտաւորութիւններդ . յիշէ որ ես բու մեղքերդ կատեմ , յիշէ որ ես բու մեղքերդ կրկերցունեմ . յիշէ զն և մի վախնար . յիշէ զն և մի մեղանչեր , յիշէ զն , որ ինձի համար , ինձմով և իմ հետս ապրիս :

Ստուգումնննն Սի-ն : (Ս) - 2 :

Իր բանտը զրուեիչն քանի մը օր առաջ ճիւղնճիւրքով Սուա անունով սափրիչին մէկէն , (որ ճիւղն Վեարս փողոցին մէջը կը բնակէր , ուսկից որ ինքը անցեր էր) ծախու աւեր էր տեսակ մը սպեղանի՝ ժանտախտէն պահպանող , որն որ աս մարդը կըշնէր և հրատարակաւ կըծախէր : Արովհետեւ իր դատաւորները առասպել մը ըսել կուզէին , որուն մէջը՝ եղի կամ սպեղանիի մը խօսք ըլլայ , նաև զաղտնի չարութեան , և Վեարս փողոցին անունը , վասն որոյ ասկից աւերի յարմար մէկը չէր գտներ որ մատնէ :

Աւտի աս մարդուն անունը տալով փիացցան՝ մատնեց զանիկայ ըսելով թէ մասնակից է աս գործոյն , և անհիմն խօսքերով որոնք մէկմէկու հետ կապակցութիւն չունէին , վերջապէս հաւանական կարծեւ տուաւ խեղճ սափրիչին իրեն հետ մէկ ըլլալը , ըսելով թէ՛ մէկ օր մը ասիկայ զնս կանչեց և ըսաւ . - Ես քեզի բան մը պիտի տամ : - Երբ որ հարցուցի իրեն , թէ ի՞նչ բան է ան , ասանկ զուցեց . - Չեմ գիտեր տեսակ մը սպեղանի է : - Ետ աղէկ , ըսի իրեն , քանի մը օրէն կուդամ ատ սպեղանին աւներու : Մէկ երկու օր անցնելէն ետքը՝ անիկայ տուաւ ինձի աս զեղը :

Դատաւորները այսքան խօսքով գոհ չէղան , և հրամայեցին փիացցային որ տեղօքը պատմէ ինչպէս ըլլալը , և իրենց ուղած պատասխանը մէկ կերպով մը թելադրեցին անոր : - Ի՞նչ ըսաւ քեզի սափրիչը երբ որ

«Մէկէն :

սպեղանին ամանովը տուաւ նէ : - Ըսաւ թէ՛ առ աս սպեղանին , և քրտէ ան կողմի պատեղուն վրայ , ետքը մեր տունը եկուր որ բեղն բուս մը ստակ տամ :

Ողորմելին մեծ զժուարութեամբ և զրեթէ բունի՝ աս անհիմն խօսքերը կըզուցէր : Դատաւորները աս անգամ հոգ չտարին ուշադրութիւն ընելու , որ փիացցայի ըսածնէրուն երկբայելի ըլլալը հասկնան . այլ վերստին բանտը զնել տուին խեղճը , և անմիջապէս մարդ խրկեցին սափրիչը բերելու :

Ի՛նչ սպառնութիւն և երկիւղ ունեցաւ սափրիչը , երբ որ եկան իմացուցին իրեն զէմ եղած սուտ ամբաստանութիւնը , ան սոսկալի զըպարտութիւնը , որ դատաւորներուն անգութ և յամաւկոտ վարմունքը , տանջանքին սարսափը և մահուան երկիւղը միայն ողորմելի փիացցային հնարել տուին :

Սուա սափրիչը աղքատ մարդ մըն էր , և հազիւ թէ իր արհեստովը կապէր . տըղայ մը և իրէք աղջիկ ունէր . առաջինը տասնուչորս տարեկան , երկրորդը տասնուերկու , և երրորդը զրեթէ վեց տարեկան : Կառավարութեան կողմանէ խրկուած մարդիկը որ ատեն ասոր տունը եկան , Սուա իր տղուն հետ հանդարտ կաշխատէր իր խանութը : Կսոնց երկուքն ալ բունեցին և սկսան տանը մէջ ամէն բան աչքէ անցունել : Սուա իսկոյն խոստովանեցաւ թէ մէկ զեղ մը կըծախէ ան , որ ինքը շնէր է ժանտախտէն պահպանուելու համար , և թէ խոստացած է որ առողջութեան սրաշտօնատէր փիացցային ալ ծախէ անկից քիչ մը : «Եւ ասիկ ըսաւ՝ կալանաւորներուն մեծին , աս փոքրիկ ամանով եղը՝ որն որ փիացցային տալու համար պատրաստէր եմ . բայց զեւ չեկաւ որ աւներ : Փառք Եստուծոյ , ես գէշութիւն մը ըրած չեմ . նայեցէք վնասուեցէք ամէն տեղ . բնաւ գէշութիւն մը ըրած չեմ . ուստի զուր տեղը իմ ձեռքերս կապել կուտաք» :

Կսոնք սկսան՝ կրտէ Սանձօնի , ամէն բան տակնուվրայ ընել , ամէն տեսակ մեծ և փոքր ամանները , շիշերը և տուփերը , բոլորն ալ աչքէ անցունելով քննեցին : Երկու բան դտան կառավարութեան մարդիկը՝

րոնք կասկածաւոր սեպուեցան . ուստի պէտք է որ անոնց վրայով խօսինք խնդրելով ընթերցողէն որ ներողամիտ ըլլայ մեզին . որովհետեւ անոնց տուած կասկածը՝ ասքնութեան ատենը , որդրմելի ստիբիլիզին միջոց մը եղաւ որ անով կրցաւ ետքը իր վրայովը ամբաստանութիւն ընել երբ որ կրտանջէին զինքը : Եւ ալ զիտնալ պէտք է որ բովանդակ աս պատմութեանս մէջ՝ տաստիկ զգուանք տուող խօսքեր ալ կան :

Բնական բան մըն էր՝ որ ժամտախտի ժամանակ շատ մարդոց հետ գործք ունեցողը , և մասնաւորապէս հիւանդի քով գացողը , կրցածին չափ իր ընտանիքէն դատուած կենար : Եւստախտն ալ պատճառ մը եղած էր՝ որ աս տաւապեալ հասարակութիւնը՝ մաքրութեան հարկաւոր ըլլալը բոլորովին մոռնայ , մանաւանդ թէ առաջուց ալ այնքան հոգ ընող մը չէին դորձածական բաները մաքուր պահելու . ուստի փոքրիկ սենեակի մը մէջ խանութիւն ետուը , երկու աման գտան մարդկային աւելորդով լեցուն , ինչպէս որ գրուած էր դատաստանագրին մէջը : Կարանաւորներէն մէկը զարմանալով անոնց վրայ ըսաւ իր ընկերներուն , թէ «՛նչ է աս . չէ որ վերի դատիկոնն է ոտից ճամբան» : Սուս պատասխան տուաւ թէ՛ «Ես հոս տակը կը պաւկիմ , և երբէք վեր չեմ երթար» :

Կաւ փոքրիկ բակի մը մէջ քարաշէն փոռ մը գտան և անոր մէջը պղնձէ սան՝ մը լեցուն պղտոր ջրով , որուն տակը մածուցիկ՝ դեղին և պղտոր նիւթ մը կար , որ պատի վրայ նետուելուն կրփակէր կրմնար հոն : Սուս ըսաւ՝ թէ «Նսիկայ մոխրաջրով լաթ լուարու համար է» . բայց չհաւտացին : Եւ յուս ամենայնիւ՝ թէ որ աս թոյնը այնքան ծածուկ զօրութիւն մը ունէր նէ , ի՞նչպէս կը համարձակէին ձեռք դպցունել և անոր փորձը ընել , ինչպէս որ կրկարդամք թէ ըրին :

Թողութեան մէջէն նուսխայ մը գտաւ կարանաւորներուն մեծը , և տուաւ Սուսային որ բացատրէ իրեն թէ ի՞նչ գրուած է անոր մէջը : Սուս թողութը առածին պէս կտոր կտոր ըրաւ . քանզի աս շիտթութեանս

1 Լավան :

մէջ այնպէս կարծեց թէ իր շինած եղին նուսխան է ան , բայց թողութին կտորները խկոյն ժողվեցին գեանէն :

Երբ որ իր տընէն դուրս կելէր Սուս ուր որ մէյուրն ալ սոք պիտի չկոխէր . ան տունէն՝ որ հիմնայատակ պիտի ըլլար , և անոր տեղը վատահամբաւութեան կոթող մը պիտի դրուէր , սասնկ ըսաւ . «Ես զէշութիւն ըրած չեմ , թէ որ ըրեր եմ նէ թող զիս պատժեն . ան եղէն զատ բան մը շինած չեմ ես . բայց թէ որ ուրիշ պակասութիւն մը ունիմ նէ , թողութիւն կը խնդրեմ» :

Նոյն օրը հարցուփորձ ըրին , յատկապէս իր տանը մէջէ մոխրաջուրին՝ և փխայցայի հետ տեսնուելուն վրայով : Եւստախտին համար պատասխան տուաւ որ իր կնոջը և իր աղջիկներուն հարցունեն : «Նոնք էին ըսաւ , մոխրաջրով լաթ լուացողները , անոնց հարցուցէք . վասն զի ինչպէս որ այսօր իմ բանտը գալս չէի յուսար՝ նմանապէս չէի գիտեր թէ մոխրաջրով լաթ լուացած են» : Սուսայի խեղճ կնիկը բերել տուին և սկսան հարցունել . ան ալ պատասխան տուաւ թէ տասը կամ տասուերկու օր առաջ մոխրաջրով լաթ լուացուած էր :

Իսկ երկրորդին համար՝ Սուս մէկիկ մէկիկ պատմեց ինչ բաներով իր եղը բաղադրուած ըլլալը , որն որ փխայցային պիտի տար . ու հաստատեց թէ անոր հետ երբէք ուրիշ գործ մը ունեցած չէ . միայն թէ տարիի մը չափ կայ ըսաւ որ ան գամ մը ինծի եկաւ ստիբուելու համար :

Երկու լուացարար կնիկ և իրեք բժիշկ կանչեցին մոխրաջուրը քննելու համար : Լուացարար կնիկները լսին՝ թէ մոխրաջուր է ան , բայց մէջը ուրիշ բան խառնած են . իսկ բժիշկները ըսին՝ թէ մոխրաջուր չէ : Յայտնի է որ ան ատենները քիմիական արհեստը ծաղկած չէր . թէ որ հիմնական պէս աս արհեստին վրայով տեղեկութիւն ունեցած ըլլային , անշուշտ աս բոլոր բանիս համար դատաստան ընել հարկաւոր չէր ըլլար :

Երբ որ կրտեսներ Սուս իր նախապաշարեալ դատաւորներուն արտորնօք ըրած դատաստանը , ինչպէս որ անատենները սովորաբար կընէին , իրաւունք ունէր ահու-

դողի մէջ մնալու : Եւ յոռւ ամենայնիւ դեռ
 տանջանք մը չտուած անոր , ուղեցին որ
 աւելի ճիշդ տեղեկութիւն մը առնեն փիաց-
 ցայէն : Սուտի վերստին հարցուցին ասոր՝
 թէ ճշմարիտ են իր ըսածները , և ուրիշ
 ըսելիք մը չունի՞ արդեօք : Փիացցա իր առ-
 ջի խօսքը նորէն հաստատեց , առանց ու-
 րիշ բան մը աւելցունելու : Են ատենը պա-
 տասխան տուին իրեն , թէ «Վմենեին հա-
 ւանական չէրենար մեզի , որ դուն ասկէց
 դատ ուրիշ գործ մը ունեցած չըլլաս սափ-
 րիչին հետ . . . Սուտի թէ որ չես ուղեր ,
 ըսին , ճշմարիտը ամբողջ զըուցել , ինչ
 պէս որ խօսք տուիր մեզի . թէ որ տկարա-
 ցունելու ըլլաս բու առջի ըսածներդ , և
 անկեղծութեամբ չպատմես ինչ որ եղած է
 ձեր երկուքին մէջը , ազատ չես մնար պա-
 տիժէն . ասոր հակառակ՝ թէ որ ճշմարիտը
 ըսես , կազատեմք քեզ ինչպէս որ խոստա-
 ցած եմք” :

Եւ խօսքերը լսելով փիացցա՝ մեծ վախի
 մէջ ընկաւ և իր զըպարտութիւնը հաստա-
 տելու սաստիկ աշխատեցաւ . բայց չկրցաւ
 ուրիշ բան մը՝ իր առջի ըսածներուն վրայ
 աւելցունել . «Ինձի ասակ տալէն երկու օր
 առաջ՝ ըսաւ , յիշեալ սափրիչը տեսայ որ
 իրեք մարդոց հետ թէսինոյի դրանը մօտ
 եղած փողոցին մէջը կայներ էր . անիկայ
 զիս կանչեց ու ըսաւ . — Պարոն , ես եղ մը
 ունիմ որ քեզի պիտի տամ . — պատասխան
 տուի իրեն . Հիմա կուտամ ինձի ատ եղը . —
 Չէ , ըսաւ . և անատենը չիմացուց ինձի թէ
 ինչ բանի հարկաւոր էր յիշեալ եղը :
 Բայց բանի մը օրէն հասէ՛րք որ տուաւ ին-
 ձի զանիկայ , ըսաւ թէ՛ Պատերուն վրայ
 քսելու է աս եղը որ մեռնողներուն թիւը
 շատնայ” : «Ո՞վ էին սափրիչին հետը եղողնե-
 րը , ինչ լսթ հազած էին” : Պատասխան
 տուաւ փիացցա՝ թէ «միտքս չէ” : վասնորոյ
 նորէն սկսան տանջել զանիկայ : փիացցա
 նորէն սկսաւ հաստատել իր սուտ խօսքերը՝
 տանջանքին մէջը . բայց աս ալ բաւական
 չսեպելով , և իրեն խոստացուած ազատու-
 թիւնը ձեռք բերելու յուսով՝ երբոր վե-
 ըրտաին բանտը կըտանէին զինքը , ասանկ
 ըսաւ . «Ես բան մըն ալ պիտի խոստովա-
 նիմ ձեզի” : Եւ իմացուց անոնց թէ Պա-
 րուէլօ անուն մէկ մը և Հերոնիմոս Միլ-

եալաքիա ու իր որդին Գասպար , մկրտա՛
 սրողները , Սուտայի բարեկամները և զոր-
 ծակից ընկերներն են : Եւ խեղճերն ալ
 բռնեցին բանտը տարին . բայց ասոնց վը-
 րայով բան մը չհաստատուեցաւ :

Հիմա սկսան Սուտայի քննութիւնը , և
 հարցուցին թէ ինչ մտքով ան եղը շինե-
 ր . «Ստակ շահելու մտքով շինեցի , ըսաւ
 անկեղծութեամբ” : «Գիտե՞ս՝ թէ ո՞վ աղ-
 տոտեց քաղաքիս պատերը” : «Ինչու տեղե-
 կութիւն մը չունիմ աս բանիս վրայով” :
 «Գիտե՞ս՝ թէ ո՞վ ստիպեց առողջութեան
 վերականգու փիացցան , որ մահաւիթ եղը
 քրտէ թէսինոյի դրանը մօտ պատերուն վը-
 րայ” : Եւ նեւեին , կրկնեց Սուտա առջին նա-
 յելով և ցած ձայնով : Գուցէ հիմա սկսաւ
 հասկնալ թէ ինչ տարօրինակ և սոսկալի
 վախճան մը պիտի ունենան աս հարցմունք-
 ները : Վերջապէս բացայայտ հարցուցին
 անոր ըսելով . «Գուն չըրատեցիր ըզ-
 կուլիէլմոս փիացցան , առողջութեան վե-
 րականցուն , որ թէսինոյի դրանը մօտը ե-
 դած պատերուն ան եղը քրտէ . դուն չտուի՞ր
 անոր ապակի շիշ մը , որուն մէջն էր ան
 քսելու եղը , խոստանալով թէ շատ ստակ
 պիտի տաս անոր” :

Սուտա զարհուրած , սոսկալի ձայնով մը
 աղաղակեց ու ըսաւ . «Չէ տէր իմ , չէ .
 Տէր Եստուած . աս ինչ զըպարտութիւն
 կըլսեմ ես : Չէ՞ , երբէք ասանկ բան մը
 ըրած չեմ ես” :

Հարցուցին իրեն թէ «Ի՞նչ պիտի ըսես ,
 երբօր ինքը կուլիէլմոս փիացցան գոյ և
 բու առջեղ հաստատելու ըլլայ աս բանը” :

Պատասխան տուաւ Սուտա . «Թէ որ
 դայ իմ երեսիս ըսելու ըլլայ նէ , պիտի ը-
 սեմ , թէ գէշ մարդ մըն է ան . բայց չկը-
 նար աս բանը ըսելու , ինչու որ երբէք ա-
 սոր վըրայով ինձի հետ խօսակցութիւն մը
 ըրած չէ . Եստուած չընէ որ ասանկ բան
 մը ընեմ ես” :

Եւ նոյն վայրկեանին դուռ մը բացուե-
 ցաւ , և փիացցան ներս բերուեցաւ :

Թէ որ խաղաղութիւն ունենանք մեր ներսի-
 դին , արտաքին բաները շատ քիչ զըրու-
 թիւն պիտի ունենան մեզի վնաս տալու :

1 Սագաս :



ENG. ANDREW W. WELLS.

Աստիճակները:

Կասկածի հոգիները :

Կատող խայի մէջ ամենէն խեղճ և անկիրթ փնայած կողմը կը համարուի Կասկածն հասանգին Լանտ բուռած վիճակը ; ուր տեղի բնակիչները ոչ միայն իրենց տարօրինակ սովորութիւններովը մեծ զարմանք կուտան ճամբորդին , այլ և անանկ լեզու մը կը խօսին որ բուն Կատող խայուց մեծ մասը անգամ չեն հասկնար : Ըսկից զատ՝ Լանտի երկիրը շատ քիչ մշակուած է ; ու տեղ տեղ մեծամեծ անտաւներով կամ Թուփերով ծած կուած է : Բնակիչները ընդհանրապէս նիհար , ածողյն և կարճահասակ մարդիկ են . ոչխարները , ձիերը սովորականէն փոքր , նմանապէս սայլերը՝ և զանոնք քաշող եղներն ալ փոքր են : Ըս տեղի հովիւները ինչպէս որ զիմացի պատկերին մէջ կը տեսնուի , ամէնքն ալ երկու սանդղաձև գաւազաններունին , որոնց վրայ զարմանալի դիւրութեամբ երէջով՝ այնպէս իրենց հօտերուն պահպանութիւնը կընեն . ինչու որ երկիրը ընդհանրապէս տափաբակ ըլլալով՝ տեղ տեղ լճացեալ ջուրեր կան , կամ մէկ երկու ոռոք խորունկ ձախիւններ . անանկ որ առանց աս գաւազանները գործածելու , անհնար է ան տեղուանքէն անցնիլ : Ուստի հովիւները՝ ոչ միայն աս գաւազաններուն վրան երէջով հանգիստ կը բալեն , հապա ան բարձր տեղը կեցած՝ զիւրաւ կը հսկեն իրենց հօտերուն վրայ , որոնք Թուփերուն մէջը ծածկուած և ցրուած ըլլալով՝ գրեթէ չեն տեսնուիր գետնէն : Յիշեալ գաւազաններուն վրայ ոռոք դնելու տեղուանք կան մէյժմէկ տախտակի կտոր ասպանդակի՝ ձեով շինուած : Բայց զգուշութեան համար՝ որ չըլլայ թէ գաւազաններուն ծայրը շուտով գետինը խրի կամ քարի մը զարնուելով կտորի , ոսկորի մը մէջ կանցունեն զանոնք :

Ըստ այսպիսի գաւազաններու վրայ ելած Լանտի հովիւները՝ խիստ հեռաւոր տեղուանք ալ կերթան զարմանալի արագութեամբ . ու իրենց կամաց քալած ատենն ալ ամենէն արագ վազող ձին կանցնին : Երբ որ Սարի-լուի՝ Պոնաբարթի կինը , Պայծի երկրին մէջ ճամբորդութիւն կընէր , հոն

տեղի մեծերը՝ աս իշխանուհին զբօսանք մը տալու համար , զունդ մը Լանտեցի հովիւներ խրկեցին . որոնք իրենց գաւազաններուն վրայ ելած , անոր կառքին առջևէն կը վազէին . և որչափ ջանաց իշխանուհին որ կառքը արագ երթալով անցնի աս տարօրինակ ուղեկիցները , անհնար եղաւ . ինչու որ՝ անոնք ալ սաստիկ արագութեամբ քալելով՝ ամենեւին ձիերուն քովէն չգտաուեցան :

Ըս հովիւներուն ձեռքը եղած երկար գաւազանը՝ քալելու ատեն հարկաւոր չըլլար , այլ միայն կը ծառայէ ան՝ երբ որ ուղին նստիլ յոգնութիւն առնելու համար : Խիստ դարմանալի ճարպիկութիւն մը ունին ատոնք՝ որ ատեն պէտք կը ըլլայ իրենց գետնէն բան մը առնելու : Ըստ անգամ իրենց գաւազաններուն վրայ երէջու համար՝ բարձր տեղ կելեն . բայց կրնան նաև իրենց գաւազանները գետնէն ոռոքերնուն անցունել և շուտ մը վրան ելել , ինչպէս որ մեր պատկերին մէջը կը տեսնուի :

Լանտի հովիւներուն մի միայն զբաղանքը՝ ատեն անցունելու համար , զուրպայ հիւսել կամ մանած մանել է , աղէկատը՝ մէջքերնին խօթած :

Եւ որովհետև վնասակար բաներ են ասոնց ուտելիքը , գէշ ջուր մը , և շատ ալ օդի կը խմեն , աս պատճառովը շուտ մը կը ծերանան , անանկ որ՝ վաթսուն տարեկան մարդ հողի կը գտնուի մէջերնին : Սովորական կերակուրնին հաճարի՞ հացն է , եղիպտացորենին կամ կորեակին ալիւրը խաշած , որն որ կը պաղեցունեն և պատառ պատառ կտրելով՝ հալեցուցած ճարպի մէջ կը թաթխեն . երբեմն ալ աղած մանր ձուկեր և խոզի եղ խորոված : Ուստի իրենց բոլոր ունեցածը աս է . հրացան մը գայլերուն դէմ գործածելու , խոզի եղ , խորովելու տապակը և ոչխարի մորթի հազուատը՝ բրդոտ կողմը դուրսի դին . ինչպէս և իրենց սրունքներն ալ ոչխարի մորթով պատած է : Բայց ձմեռը՝ աս հազուատին վրայէն սպիտակ մուշտակէ վերարկու մըն ալ կառնեն սրածայր վեղարով մը , կարմիր ժապուէններով և ձիւռ մագերով զարդարուած : Լասարաւիօրէն սև և տափակ

՝ Տիւր : ՝ Երկրի : ՝ Երկրի : ՝ Երկրի :

դիտարկ մը ունին ասոնք գլուխնին : Լանտեցիք՝ կրտս Կ. Գօրն , որ Կասկոնի ծայրին եղբորքը պտրտելով դիտեր է , ճամբորդ ժողովուրդ մըն են , որոնց կէսը փոփոխակի իրենց խրճիթները մնալով՝ երկրագործութիւն կրնեն , որ ատեն միւս կէսը իրենց եղբորքը կառնեն մօտ տեղուանք կրտսնին քանոնք ծախելու համար : Կը թէպէտ նիհար և փափուկ կաղնութիւն մը ունին ասոնք , բայց օդերուն անբարեխառնութենէն չեն վախնար , ու տարիին երրորդ մասը յարզէ վրայ կը պառկին , երբոր իրենց բնակարանը կը գտնուին . իսկ ճամբորդութեան ասոն՝ սոյլն կամ գեանի վրայ կը պառկին :

Լանտեցի երկրագործը՝ բան սորվելու հետաքրքրութիւն չունի , խիստ յամաւկոտ է բնութեամբ , ամէն նորաձեւութեանց թշնամի , սաստիկ նախանձառ , լւակաց և մեղամաղձառ :

Վրիստոսի անուանելը մէկ մարտին էն :

«Վնչու որ մենք շատերնիս մէկ հաց՝ մէկ մարմին եմք» :
ա կորնթ . Ժ . 17 :

Պօղոս առաքեալ աս խօսքը ըսելով չնչանակեր թէ բրիտանները մէկ հաց մըն են , կամ մէկ մարդկային մարմին մը , բայց ըսել կուզէ թէ ինչպէս որ հացին մասունքները , կամ մարմինին անդամները մէկը կը կու հետ միաւորուած են , նմանապէս բոլոր բրիտանները՝ որ Վրիստոսի Մարմնոյն հաղորդութեանը հացին բաժանորդ են (ա կորնթ . Ժ . 16) , մէկ են . մէկ հաւատք մը , մէկ յոյս մը , մէկ մկրտութիւն մը , մէկ Տէր մը , մէկ հօգի մը , մէկ ժառանգութիւն մը ունենալով :

Ի՞նչ է Վրիստոսի խաչը :

Վրիստոսի համար ամէն բան ձգելը և ամէն նեղութիւն կրելը , Վրիստոսով քաղելը , իր հրամանները կատարելը , իր արքիւլած բաներէն ետ կենալը , իր խոստմունքներուն ապաւինիլը , իր բրած Վաւութեանը հաւատալը անանկ հաւատքով մը որ բոլոր մեղքերէն կը մաքրուի մարդը , շոգիին ուղածին պէս ապրիլը ու չէ՛ թէ մարմինին ուղածին պէս , խօսքով գործքով ու Հոգեւով Տէր Եիսուսը հաղնիլը , ահա՛ ասոնք են Վրիստոսի խաչը՝ որով աշակերտը խաչը ելլած է աշխարհին , ու աշխարհ ալ անոր : Ես է Վրդարութեան խաչը՝ որ աս կեանքիս մէջը վերցունելով , գալու անվախձան կեանքին մէջը Վրդարութեան պսակը կուտայ :

Երեսուցի օրէնքին հոգեւոր ըլլալը :

«Գիտեմք որ օրէնքը հոգեւոր է՝ Հռոմէ . Է . 14 :

Յայտնի է որ Առաքեալին աս ըսած օրէնքը՝ չէ թէ Կովսէսի ծիսական օրէնքն է , հասլա տառնաբանեայ օրէնքը . ան օրէնքն է որ կրտս թէ «Մի ցանկալ» . (համար 7 .) որ սուրբ է , արդար՝ բարի և հոգեւոր . (համար 12 , 14 .) ան օրէնքն է՝ որուն հընազանդելու համար Չանք ըրած ատեննիս , կրտսնեմք որ մեղքը արգելք կը լըլայ մեզի , չթողուր որ հնազանդիմք : Աւասի յայտնի է թէ ասիկայ ստանաբանեայ օրէնքն է , և ոչ ծիսականը :

Աս օրէնքը կատարեալ է . (Մարտ . ԺԺ . 7 .) և հաստատուած է Ստեղծողէն , ատեղեղքին արդար օրինադրէն , ու ճիշտ իր (Օրինադրին պատկերն ու նմանութիւնն ունի : Ինչկայ մեզի ու մեր վիճակին կատարեալ յարմարութիւն մը ունի . և իրեն հնազանդողներուն կատարեալ երջանկութիւն մը կուտայ : Ըստուծոյ օրէնքը հոգեւոր է :

Ե . Վ ամն զի անիկայ հոգեւոր հնազանդութիւն մը կը պահանջէ , սրտին կրնայի և անոր հնազանդութիւնը կուզէ :

Մարդիկ արտաքին երեւոյթին կը նային . երկրաւոր թագաւորները մարդոց գործքուն վրայ կիշխեն , սիրտը չեն կրնար բըննել , անոր գաղանի խորհուրդները չեն կրնար իմանալ , ու անոր շարժմունքները չեն կրնար կառավարել . բայց Ըստուած Հօգի է . կը բնէ սրտերը ու չկրնար խաբուել , և ուրիշ բան մը հնազանդութիւն չհամարիր , այլ ան հնազանդութիւնը որ սրտէն կուզայ : Թէ որ սիրով չէ մեր հնազանդութիւնը , հնազանդութիւն չէ : Թէ որ արտաքին գործքերնիս ալ սրտանց չեմք կատարեր , ան նոյն բանը՝ թէ և Ըստուծոյ պատուէրն է , բայց տակաւին անհնազանդութիւն և ապստամբութիւն կը ստեղծուի մեզի . Ըստուածային պատուէրը ամէն մարդու աս է . «Իմ որդեակա՛ սիրտդ ինձի տուր» : Ըստ . իր . 26 : Թէ որ սիրտը իրեն չտանք , անոր հաճելի բան մը տուած չեմք ըլլար :

Ի . Օրէնքը կուզէ՛ որ մեր ամէն գործքերը Ըստուծոյ փառքին համար ըլլան . «Վրդ՝ թէ ուտէք՝ թէ խմէք՝ թէ ինչ գործ ալ որ ընէք , ամէն բան Ըստուծոյ փառքին համար ըրէք» : ա կորնթ . Ժ . 31 : Ըսի

կայ ըսել է որ ամէն գործքերուն նախառա-
կը՝ Լստուծոյ փառքը պիտի ըլլայ, որ մի-
այն ան բաները ընելու եմք՝ որոնցմով որ
Լստուած կը փառաւորի: Պէտք է որ չէ
թէ միայն բարի գործենք, այլ նաև բարի
շարժառիթներով ընենք ան գործքերը .
մանաւանդ մեր ամենամեծ շարժառիթը պի-
տի ըլլայ՝ զԼստուած փառաւորել և անոր
հաճելի ըլլալ: Եւ ասիկայ պէտք է ընենք
մեր բոլոր գործքերուն մէջը: Սեր ամենէն
փոքրիկ գործքերը, մեր ուտելը և խմելը
անգամ պէտք է որ Լստուծոյ փառքին հա-
մար ըլլան: Սեր ըրած գործը որ աս վախ-
ճանին չնայիր, թէ և անիկայ Լստուծոյ հը-
րամայածն ալ ըլլայ, տակաւին մեղք է,
Լստուծոյ փառացը համար չըլլալով: Ըհա
պսպէս կը տեսնենք թէ ինչո՞ւ համար շատ
մարդոց աղօթքը՝ ողորմութիւնը և երկըր-
պագութիւնը անգամ մեղք կըսեպուն Լս-
տուծոյ առջևը:

Գ. Օրէնքին հրամայած պարտաւորու-
թիւնները Հոգևոր պարտաւորութիւններ
են: Ընտք բոլորն ալ պէտք է որ հոգևոր
կերպով մը կատարուին. նո՞ր տես հասնա-
բանեայ օրէնքին առաջին պատուերին մէջն
հրամայուած պարտաւորութիւնը. «Ուրիշ
աստուածներ պիտի չունենաս իմ առջիս»:
Կամ ինչպէս որ ըսուած է ուրիշ տեղ մը,
թէ՛ «Բ. ու Տէր Լստուծոյդ երկրպագու-
թիւն ընես, ու միայն անիկայ պաշտես»:
Սաղմ. 7. 10: Ըսիկայ կը պահանջէ որ
զԼստուած գիտնանք ու ճանչնանք իբրև մի
միայն ճշմարիտ ու մեր Լստուածը. և
աս խոտտովանութեանը պէս երկրպագու-
թիւն ընենք անոր և փառաւորենք զանի-
կայ: Բայց ի՞նչպէս երկրպագութիւն պի-
տի ընենք անոր: Յիբաւի հարկաւոր են ար-
տաքին գործողութիւններ և պաշտօններ,
բայց լրկ արտաքին գործքերը, որ չափ
բաղմամբիւ, փառաւոր ու հանդիսաւոր ալ
ըլլան, ոչինչ են Ընտք աչքին առջևը:
Սրտանց չեղածը ատելի է անոր: Լստուած
մերժեց և անարգեց Հրէից պաշտօնները,
երբոր զանոնք սրտանց չմտուցին, թէ և ա-
նոնք Ինքը սահմաներ էր, ու ան ժողովուրդն
ալ յատուկ իրեն ընտրեր էր: Եսայ. 39.
11—15: «Լստուած Հոգի է. և իրեն եր-
կըրպագողներուն ալ պէտք է որ հոգիով

ու ճշմարտութիւնով երկրպագութիւն ը-
նեն»: Յաղմ. 7. 24:

Կը պահանջուի մեղմէ՞ որ աղօթք ընենք .
բայց, թէ որ սրտերնուս մէջը մեղք տես-
նենք, Տէրը պիտի չսէ. (Սաղմ. 18.)
«Գ. ուն ճշմարտութիւն կուզես երիկամուն-
քին մէջը: Լստուծոյ զոհը կտարած հոգին
է. կտարած ու խոնարհ սիրտը՝ ո՞վ Լստ-
ուած, չես անարգեր»: Սաղմ. 8. 6, 17:
Թէ որ խոնարհ կտարած՝ հաւատացեալ և
հնազանդ սրտի զոհը Լստուծոյ մատուցա-
նելուն տեղը՝ փարիսեցիին պէս ինքզինքնիս
արգարացունելու, մեր աղէկութեանը ու
բարեպաշտութեանը վրայ խօսելու, ինք-
զինքնիս գովելու համար երթանք Լս-
տուծոյ առջևը, անոր պէս ալ պիտի
մերժուիմք: Սաղմ. 14. 9—14: Սեր ա-
ղօթքը պէտք է որ յառաջ գոյ հաւատա-
րիմ, ու չէ թէ «խաբերայ պուկունքներէ»:
Սաղմ. 14. 1:

Եւ ինտոր որ աղօթքի կողմանէ, անանկ
ալ ամէն մէկ պարտաւորութիւն կատարե-
լու կողմանէ՝ թէ որ արտաքին գործը սրտով
չէ և անոր զգայութիւններէն յառաջ
չգար, անօգուտ է. քանզի օրէնքը կը պա-
հանջէ արտաքին գործողութիւնները միայն
իբրև նշան սրտին զգայութեանը:

Գ. Օրէնքին արգիլած բաները՝ սըր-
տին վերաբերեալ բաներն են. «Սրտէն
կելլեն չար խորհուրդները, սպանութիւն-
ները, շնութիւնները, պղտնկութիւնները,
գողութիւնները, սուտ վկայութիւնները,
հայհոյութիւնները»: Սաղմ. 19: Ըմէն
չար գործք՝ չար զգացումէ կամ կիրքէ մը
յառաջ կուգայ: Ուստի չար գործքերը
արգիլելու համար, օրէնքը ան զգացումնե-
րը կամ կիրքերը կարգելէ՝ ուրից որ ա-
նոնք յառաջ կուգան: Օրինակի համար՝
վեցերորդ պատուիրանքը կարգիլէ սպանու-
թիւնը: Բայց մեր փրկիչը աս պատուիրան-
քը մեկնելով՝ կըստովեցունէ թէ անիկայ կար-
գիլէ ամէն բարկութիւն և նախասական
խօսքերը. «Սեր էք՝ որ առաջններուն
ըսուեցաւ թէ, Սպանութիւն մի ըներ .
քանզի ով որ սպանութիւն կընէ՝ դատաս-
տանի պարտաւոր պիտի ըլլայ: Բայց ես
ձեզն կըսեմ թէ՛ Ռվ որ իր եղբորը պարսպ
տեղը սրգողի, դատաստանի պարտաւոր

պիտի ըլլայ . և ով որ իր եղբօրը անմիտ ըսէ՝ ատեանի պարտաւոր պիտի ըլլայ . և ով որ իր եղբօրը խենթ ըսէ՝ զեհեանի կը ըսակին պարտաւոր պիտի ըլլայ” : Մատթ . Ե . 21 , 22 : Եւ Յովհաննէս առաքեալ կըսէ թէ՝ «Վ՛մէն ով որ իր եղբայրը կատէ՝ մարդասպան է” . (Կ՛հ . 7 . 15 .) ուրեմն աս «Վ՛ի սպանաներ” պատուիրանքը կարգիլէ բարկութիւնը , ատելութիւնը , նախանձը , չարակամութիւնը , ևն . ինչու որ աս չար կիրքերը սպանութեան կրտանին , և բուն սպանութիւն են սրտին մէջը :

Այսպէս նաև մեր փրկիչը կըսորվեցուն ինչ մեզի , թէ սրտի ցանկութիւնով կըմեղան չեմք եօթներորդ պատուիրանին դէմ : «Վ՛ ըսեր էք որ բտուեցաւ , Դ՛ նութիւն մի ըներ , բայց ես ձեզի կըսեմ , թէ՛ Ով որ կնիկ մարդու կընայի անոր ցանկանալու համար , անիկայ իրեն սրտին մէջն ալ շնութիւն ըրաւ անոր հետ” : Մատթ . Ե . 27 , 28 : Վ՛մէն պիղծ ցանկութիւն շնութիւն է :

Ասանկ ալ առաջին և երկրորդ պատուիրանքները կուսպաշտութիւնը կարգիլեն : Բայց ի՛նչ է կուսպաշտութիւնը . անիկայ չէ թէ միայն չաստուածներու երկրպագութիւն ընել , և փորուած ու նկարուած պատկերներու խոնարհիլն է , հասպո նաև ուրիշ ինչ և իցէ բան մը Մատուծոյ տեղ ղնել , ու զանիկայ Մատուծոյ տեղը սիրել ու անոր ծառայելն է : Եւ աս միտքով առաքեալը կըսէ , թէ՛ Վ՛գահութիւնը՝ կը ռապաշտութիւն է . (Մատ . 7 . 5 .) և մէկ քանիներուն համար ալ կըսէ , «որոնց Մատուծը իրենց փորն է” : Փիլեյ . 7 . 19 :

Եւ խորը օրէնքը մէկ հոգևոր պահանջ մտնքի մը մէջ պարունակուած է , որ է Սէր : «Եւ Յիսուս ըսաւ անոր . Վ՛ու Տէր Մատուածդ պիտի սիրես քու բոլոր սրտեդ , և քու բոլոր անձեդ , և քու բոլոր միտքեդ : Վ՛ս է մեծը ու առաջին պատուիրանքը : Երկրորդը ասոր նման՝ քու ընկերդ պիտի սիրես քու անձիդ պէս : Վ՛ս երկու պատուիրանքէս կախուած են բոլոր օրէնքները և մարդարէները” : Մատթ . Իբ . 37—40 : «Եւ մէկուն պարտական մի գտնուիք , միայն թէ մէկըմէկ սիրելու . վասն զի ով որ իր ընկերը կըսիրէ , անիկայ օրէնքը կըկատարէ . ինչու որ ան մի շնարը , ու մի սպանաները ,

և մի գողնարը ու մի սուտ վկայութիւն ընելը , և մի ցանկարը , և թէ ուրիշ պատուէր մըն ալ կայ՝ աս խօսքին մէջ բոլորը կըբովանդակուի , թէ Վ՛ու ընկերդ քու անձիդ պէս սիրես : Սէրը իր ընկերին զէշնութիւն չըներ . օրէնքին բովանդակութիւնը սէրն է” : Լուկ . Ժ7 . 8—10 : () օրէնքին առաջին տախտակին պարտաւորութիւնները , զինքը սիրելնուս մէջ կը պարունակուին , ու երկրորդ տախտակին կամ զէպի մարդոց ունեցած պարտաւորութիւննիս զանոնք սիրելնուս մէջ պարունակուած են : Վ՛ն որ կըսիրէ կըհնազանդի . և ան որ չսիրեր՝ ուրիշ ինչ ալ սր ընէ , չհնազանդիր : () օրէնքը՝ կատարեալ և հաստատուն սէր կըստահանջէ . մշտապէս և ամենամեծ սէր . ասոր տեղը ուրիշ ինչ և իցէ բան ընդունելի չէ :

Թէ որ ասանկ է , ուրեմն՝

1 . Ո՛րչափ չափազանց ընդարձակ է Վ՛ս տուծոյ պատուիրանքը : Մատթ . ՃԺԺ . 96 : Վ՛նիկայ սրտին խորութեանը մէջ կըհասնի , և բոլոր անձին հնազանդութիւնը կուզէ : Կըպահանջէ որ ամէն գործողութիւն Վ՛ս տուծոյ և անոր փառացը սիրոյն համար կատարուի : Վ՛ս օրէնքը սաստիկ կըքննէ և կըփորձէ զմեզ :

2 . Օրէնքով փրկուիլը ո՛րչափ անկարելի է . ինչու որ կատարեալ հնազանդութիւն կըփնտուէ օրէնքը . «Վ՛ն որ մէկ բանով մը կըծուի , անիկայ բոլոր օրէնքներուն դէմ գործող կըլլայ” : Յով . Ի . 10 : Բայց ս՛ր և իցէ օրէնքին կատարեալ հնազանդ գտնուող ո՛վ կայ : Ո՛վ կրնայ ըսել թէ ես մաքուր եմ : Ձեր սրտերը ու ձեր վարքը բարդատեցէք Մատուծոյ սուրբ և հոգևոր օրէնքին հետ , և բան մը պիտի չգտնէք ձեր մէջը , բայց միայն մեղք : Գուք ամենևին բան մը ըրած չէք՝ որ անիկայ թողութեան կարօտ չըլլայ . ուրեմն ասանկ օրէնքով մը ի՛նչպէս կրնաք փրկուիլ , ո՛ր է ձեր արժանաւորութիւնը , որով կարող ըլլաք փրկուիլ : Վ՛մենալու մարդոցը ամենաբարի գործքերը անգամ զերենք դատապարտութեան տակ կըթողուն :

3 . Ո՛րչափ փառաւոր բան է Վ՛րիստոսով փրկութիւնը . Մատուծոյ Որդւոյն ալ ինչնէն զատ ուրիշ ի՛նչ կրնայ մեզ խալը

սեղ՝ բարի , կատարեալ և հոգևոր օրէնքին դատապարտութենէն : Վրիստոսի Հոգիէն զատ ո՛վ կրնայ մեզ ասանկ հոգևոր և սուրբ օրէնքի մը հնազանդելու կարողացունել . «()րէնքը մեզի վարժապետ եղաւ՝ Վրիստոս Յիսուսի բերելու» : Վար. 7 . 24 :

4 . Կըտեսնեմք թէ ինչ տեսակ հնազանդութիւն մատուցանելու եմք Մատուծոյ : Տասնաբանեայ օրէնքը աւետարանով աւրուած չէ՛ . յիբաւի պէտք չէ՛ որ անով արդարութիւն փնտուենք , և աս մտօք անկից խալած եմք . սակայն իբրև կենաց կանոն , տակաւին անոր տակն եմք . քանզի անիկայ Մատուծոյ յաւիտենական օրէնքն է , հաստատուն և անփոփոխ իր աթուղին պէս : «ՂՂմարիտ ՃՂմարիտ կրեսմ՝ ձեզի՛ Մինչև որ երկինք և երկիր անցնին , օրէնքներէն և մարդարէնէն եօթա մը՝ որ նշանագիր մըն է՝ պիտի չանցնի , մինչև բոլորն ալ կատարուի» : Մատ. 5 . 18 : Թէ որ մենք ՃՂմարիտ քրիստոնեաներ եմք , նորոգուած , Մատուծոյ Հոգիովը վերադին ծնած , կըսիրեմք աս օրէնքը . և թէպէտ կատարելապէս ալ չէ՛ նէ , բայց ՃՂմարիտ փափաքով ու սրտով կըհնազանդուիմք անոր , Հոգիին նորոգութիւնովը : Մատուծոյ օրէնքին և Վետարանին որչափ տգէտ են անոնք , ուրմք կըկարծեն թէ սոսկ արտաքին դործողութիւններ՝ պաշտօններ և արարողութիւններ կատարելով՝ կրնան հոգիներնուն փրկութիւնը ստանալ , կամ Մատուծոյ ընդունելի ըլլալ : Ուրեմն մենք ՃՂմարիտ սըբութեան հետեւինք , առանց որուն մէկը չկրնար տեսնել Տէրը : Եբ. Ժբ . 34 : Մատուծոյ օրէնքը կենաց մի միայն ուղիղ կանոնն է . անով ամէն մարդ պիտի դատուի , ու ան՝ որ չսիրեր զանիկայ , և իր կեանքին մէջ միայն անոր հնազանդելու դիտաւորութիւնը չունի , անով յաւիտեան պիտի դատապարտուի :

Մատուած՝ իր ողորմութիւնը կըցուցընէ մեղաւորներուն , չէ՛ թէ անոնց արգեանցը կամ արժանաւորութեանը համար , հապա անոր համար որ անոնք կարօտ են իր ողորմութեանը :

Խիստ մեծ տարբերութիւն կայ մտածելու թէ մենք պարտիմք երակտագէտ ըլլալ , և գործով երակտագէտ ըլլալու մէջ : Շատ անգամ կըմտածեմք թէ երակտագէտ եմք , որ ատեն միայն ուրախ եմք :

Մատուած և Եկեղեցական :

Մատուածին մէկը՝ երբոր կըխօսակցեր բարեպաշտ Եկեղեցականի մը հետ Մատուածութեան վրայով՝ ու կըջանար որ պաշտպանէ իր փաստերը , «Մեկարելի բան է , ըսաւ Եկեղեցականը , չկայ Մատուած մարդ» : «Վոյ պարոն , պատասխանեց Մատուածը , ահա ես անատուած մըն եմ . և դուն չես կրնար փաստով ցուցընել ինծի , թէ կայ Մատուած մը . քանզի ես աղէկ գիտեմ որ աննարին է հաստատել ատ բանը» . . . : «Կեցի՛ր , ըսաւ Եկեղեցականը , առաջ պէտք է ես համոզուիմ քու անատուած ըլլալուդ» : «Չէ՞ որ ես կըսեմ քեզի՛ պատասխանեց մարդը , թէ Մատուած մըն եմ» : «Բայց իմ Մատուածաւորնչա՛ ըսաւ Եկեղեցականը , կըսցայնէ թէ՛ մարդկային սիրտը՝ չէ՛ թէ միայն խիստ չար է , հապա նաև ամէն բաներէն աւելի խաբերայ ալ է , և Հոգին Սուրբ կըհարցունէ՛ թէ ո՛վ կրնայ ճանչնալ զանիկայ . (Եբ. Ժ . 9) ուստի գուցէ աս բանիս մէջ խաբուած ես գուն» : «Պարոն , պատասխանեց անատուածը , չեմ՝ գիտեր ես թէ ինչ կըհաւատամ , ես բանական մարդ մը չեմ» : «Ուրեմն եկո՛ւր փորձենք աս բանը , ըսաւ Եկեղեցականը . մէկ փորձ մը պիտի առաջարկեմ՝ քեզի , որն որ առանց դժուարութեան կրնաս կատարել . և թէ որ աս փորձը կատարես , ան ատեն ես ալ պիտի սկսիմ քեզի հետ մի՛ճարանիլ» : «Չէ՛ , ըսաւ անատուածը՝ չեմ՝ ուղեր խօսք տալ , առանց գիտնալու թէ ի՞նչ է ան որ պիտի ըսես ինծի» : «Միկայ քու խոստովանած հաւատքիդ ճիշդ համաձայն ու նաև յարմար և դիւրին բան մըն է , ըսաւ եկեղեցականը : «Վայէ՛ դուն կտրէ՛ դատաստանը , թէ որ անանկ չըլլայ նէ իմ ըսածս , ան ատեն պարտաւոր չես անիկայ ընելու» : «Շատ աղէկ , կրնեմ ըսաւ անհաւասը յօժարութեամբ , ի՞նչ է քու առաջարկութիւնդ» : «Մտ գիշեր , պատասխան տուաւ եկեղեցականը , երբոր մարդիկ խորունկ քունի մէջ կը մտնեն , ու թանձր խաւարը աշխարհս կըծածկէ , պէտք է կամաց կամաց քաղելով երթա մինակ դէպ ՚ի դիմացի բլուրը . ոչ թէ թեւամտութեամբ , այլ խորունկ մտնալով . և ան բլուրին դագաթը ծածկող հովանաւոր անտառին թանձր մթութեան մէջը կանգնիս , և աչքերդ ու ձեռքերդ սպառնալեօք դէպ ՚ի երկինքը վերցունելով ըսես . Օ՛խ ստեղծող Մատուած չկայ , զիս պահպանող Մատուած չկայ , և չկայ Մատուած՝ որ վախ ունենամ անկից . կընե՛ս ասիկայ» : Մտ առաջարկութիւնը անցուց զանհաւատը . «Ուստի՛ ըսաւ Եկեղեցականը , դուն անատուած չես , Ես ճաւատտ գիտէի քու խաբուած ըլլալդ , երկուքս ալ համաձայն եմք թէ կայ Մատուած , ու փաստեր փնտուելու կարօտութիւն չունիմք» :

Գիրտերը Քննեցէ : Յ՛ւճ . Ե . 39 :

Եւ ինչո՞ւ համար : Հեռակեալ յիսուն պատճառներուն համար :

Ե . Վ ան զի անոնք երկինքէն եղած յայտնութիւններ են : Խ՛ՊԵ . Խ . 12 :

Բ . Վ ան զի Քրիստոսի պատուէրը աւանկ է , և բուն անոնք են որ Քրիստոսի համար կրվկային : Յ՛ւճ . Ե . 39 :

Գ . Վ ան զի Քրիստոս ըսաւ , ով որ կրկարգայ՝ թող հասկընայ : Ս՛աբԷ . Ի՛ք . 15 : Ս՛աբԷ . Ժ՛ք . 14 :

Դ . Վ ան զի հաւատքը լսելէն է , ու լըսելը Քրիստոսի խօսքէն : Հ՛աբԷ . Ժ . 17 :

Ե . Որ հաւատաք Ըստուծոյ՝ էր Որդւոյն համար ըրած վկայութեանը : Յ՛ւճ . Ը . 18 : Ե . 37 : Ս՛աբԷ . Դ՛ք . 17 : Ժ՛ք . 5 :

Յ . Վ ան զի՝ անոր մէջ գտնուածէն զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը մարդուս տրուած , որ անով կարող ըլլանք փրկուիլ : Գ՛աբԷ . Դ՛ք . 12 :

Զ . Վ ան զի՝ հեղութիւնով ընդունիք նէ ան խօսքը կրնայ ձեր հոգիները փրկել : Յ՛աԷ . Խ . 21 :

Ը . Վ ան զի՝ ան որ հաւատայ՝ պիտի փրկուի , և ան որ չհաւատար՝ պիտի զատապարտուի : Ս՛աբԷ . Ժ՛ք . 16 :

Թ . Որ ձեր հաւատքովը առաքինութիւն աւելցունէք , ու առաքինութիւնով գիտութիւն : Խ՛ՊԵ . Խ . 5 :

Ժ . Որ աճիք մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհքովը ու գիտութիւնովը : Խ՛ՊԵ . Դ՛ք . 18 :

ԺԲ . Վ ան զի գրուած է որ , չէ թէ հացով միայն մարդ կապրի . հապա՞ ան բոլոր խօսքերովը որ Ըստուծոյ բերնէն կեղէ : Խ՛ՊԵ . Ը . 3 : Ս՛աբԷ . Դ՛ք . 4 : Գ՛աբԷ . Դ՛ք . 4 :

ԺԳ . Վ ան զի Ըստուած պատուիրեց որ շատ զգուշութեամբ պահենք իր պատուիրանքները : Ս՛աբԷ . Ժ՛ք . 4 :

ԺԴ . Որ ճշմարտութիւնով սրբացած ըլլաք : Յ՛ւճ . Ժ՛ք . 17 , 19 :

ԺԵ . Որ Քրիստոսի խօսքերը լսէք , ու անոնք բանէք : Ս՛աբԷ . Է . 24 : Գ՛աբԷ . Դ՛ք . 47 :

ԺԶ . Որ երկինց թագաւորութեան աղէկ աշակերտեալ կարգացող մը ըլլաք : Ս՛աբԷ . Ժ՛ք . 52 :

ԺԷ . Որ անոնք ձեր որդւոցը կրկին և

կրկին սորվեցունէք , թէ ձեր տուները նստած ատենիդ՝ թէ ճամբան քալած ատենիդ՝ թէ պառկած ատենիդ և թէ ելած ատենիդ : Խ՛ՊԵ . Դ՛ք . 7 : Ժ՛ա . 19 :

ԺԸ . Որ մէկը մէկ յորդորէք , ու այնքան աւելի՝ որքան որ ան օրը մօտեցած կըտեսնէք : Խ՛ՊԵ . Ժ՛ք . 25 :

ԺԹ . Վ ան զի գաղտնի բաները մեր Տէր Ըստուծոյն յատուկ են , բայց յայտնի եղածները՝ մեզն և մեր զուկըներուն յատուկ են յաւիտեան : Խ՛ՊԵ . Ի՛ք . 29 :

ԺԺ . Վ ան զի՝ ան ամէն Գիրքերը Ըստուծոյ շունչն են , և շահաւոր սորվեցունելու համար : Խ՛ՊԵ . Դ՛ք . 16 :

Ի . Որ կատարեալ ըլլաք՝ ամէն բարի գործքերու մէջ հաստատուած : Խ՛ՊԵ . Դ՛ք . 17 :

ԻԲ . Վ ան զի ինչ որ գրուեցաւ նէ՞ մեր սորվելուն համար գրուեցաւ : Հ՛աբԷ . Ժ՛ք . 4 : Դ՛ք . 23 , 24 : Խ՛ՊԵ . Ի՛ք . 9 , 10 : Ժ՛ք . 11 : Խ՛ՊԵ . Դ՛ք . 16 , 17 :

ԻԳ . Որ ձեր աչուրները բացուին , որ Ըստուծոյ օրէնքներէն հրաշքներ տեսնէք : Ս՛աբԷ . Ժ՛ք . 18 և 129 :

ԻԴ . Որ կարող ըլլաք Ըստուծոյ թագաւորութեան խորհուրդները զիտնալ : Ս՛աբԷ . Դ՛ք . 11 : Ս՛աբԷ . Ժ՛ք . 11 : Գ՛աբԷ . Ը . 10 :

ԻԵ . Վ ան զի անոնք հաստատուն մարգարեական խօսքեր են , որ աղէկ կընէք թէ որ անոր տաք խեղճերնիդ , որպէս թէ մէկ ճրագի մը՝ որ խաւարային տեղը լոյս կուտայ : Խ՛ՊԵ . Խ . 19 :

ԻԶ . Վ ան զի չէ թէ բնաւ մարգարեութիւնը մարդոց կամքին պէս տրուեցաւ . հապա Սուրբ Հոգիէն շարժուած Ըստուծոյն եղած մարդիկները խօսեցան : Խ՛ՊԵ . Խ . 21 :

ԻԷ . Վ ան զի անոնք ձեր ոտուրներուն ճրագն են , ու ձեր շաւիղին լոյսն են : Ս՛աբԷ . Ժ՛ք . 105 :

ԻԸ . Որ ձեր ճամբան ալ արդարներուն ճամբան պէս ըլլայ , որն որ պայծառ կը փայլէ մինչև ցորեկը : Խ՛ՊԵ . Դ՛ք . 18 :

ԻԹ . Վ ան զի Ըստուծոյ բերնին օրէնքը հազարաւոր ուղիէն ու արծաթէն առաւել աղէկ է : Ս՛աբԷ . Ժ՛ք . 72 :

ԻԺ . Վ ան զի իմաստութեան սկիզբը Տէրոջը վախն է : Խ՛ՊԵ . Խ . 7 :

1. Վ. Վ. ամեն զի նեղուայք է ան դուռը՝ ու նեղ է ան ճամբան, որ դէպի կեանքը կը տանի, և քիչերը կան՝ որ անիկայ կը գտնեն : Սաբ. 14 :

1. Մ. Վ. ամեն զի ճամբայ կայ որ շտտակ կերևայ մարդոյ, բայց անոնց վերջը մահուան ճամբաներ են : Մատ. 7. 25 :

1. Ն. Ս. Որ ձեր ճամբաներուն վրայ մտնուածք, ու ձեր ոտքերը Մտուածոյ վկայութիւններուն դարձունէք : Սաբ. 20. 59 :

1. Գ. Վ. ամեն զի ամէն օր գիրքերը քննողները աւելի աղիւիւ են քան թէ ուրիշները : Գործ. 11 :

1. Գ. Ս. Որ կարող ըլլաք ճամբաներուն վրայ կենալ, ու նայիլ և հարցունել Տէրոջը յաւիտեանական ճամբան, և քննել աղէկ ճամբան որը ըլլալը, ու անոր մէջը քալել, որ հողիներնուդ հանգստութիւնը գտնէք : Երեմ. 7. 16 :

1. Ն. Վ. ամեն զի Մտուածոյ օրէնքը սիրողներուն շատ խաղաղութիւն կայ, ու անոնց գայթակղութիւն չըլլար : Սաբ. 20. 165 :

1. Օ. Վ. ամեն զի հիմա ամէն մարդ պարտաւոր է իր քաղաքակցին ու իր եղբորը Սուրբ Գիրքը սորվեցունել, ըսելով թէ ճանչցիր Տէրը, ինչու որ դեռ ամէնքն ալ Տէրը ճանչցած չեն : Եբ. 1. 11 :

1. Ն. Վ. ամեն զի անոնք որ գիրքերը չեն գիտեր՝ զիւրաւ կը մոլորին : Սաբ. 17. 29 :

1. Ր. Վ. ամեն զի Սուրբ Գիրքերը կրնան մանուկներն ալ իմաստուն ընել փրկուելը, և Վրիստոս Հիսուսի վրայ եղած հաւատքովը : Ե Տեմ. 7. 15 :

1. Ս. Վ. ամեն զի երնէկ անոր որ կրկարդայ կամ կըրէ աս մարգարէութեան խօսքերը, և կը պահէ ինչ որ ասոր մէջը գըրուած է : Յայ. 10. 3 :

1. Ս. Վ. ամեն զի Մտուածոյ պատուիրանքներով՝ մարդ իր թշնամիներէն իմաստուն կըլլայ, ինչու որ անոնք միշտ իր քովն են : Սաբ. 20. 98 :

1. Ս. Վ. ամեն զի Սուրբ Գրոց մէջը Վրիստոսի դարտեանը և աշխարհիս վերջին նշանները կան : Սաբ. 17. 3 :

1. Ս. Ս. Որ կարող ըլլաք ժամանակներուն նշանները գիտնալ : Սաբ. 7. 3 :

1. Գ. Վ. ամեն զի ամէն բանին վախճանը մտեցեր է : Կոր. 7. 7 :

1. Գ. Վ. ամեն զի ալ ասկէց քիչ մը ատեն նէն ան որ պիտի գայ՝ կուգայ, ու չուշանար : Եբ. 7. 37 :

1. Ն. Ս. Որ երբոր Տէրը գայ՝ ձեզ արթուն գտնէ : Գոր. 7. 37 :

1. Օ. Վ. ամեն զի թէ որ արթուն չկենաք, ինքը գողի պէս պիտի գայ : Յայ. 7. 15 :

1. Ս. Վ. ամեն զի չէք կրնար խալիլ, թէ որ անհոգ ըլլաք աս փրկութենէն : Եբ. 7. 3 :

1. Ս. Վ. ամեն զի թէ որ իմաստուն էք, դուք ձեզն իմաստուն էք. բայց թէ որ ծաղը ընէք, անիկայ միայն դուք պիտի քաշէք : Մատ. 7. 12 :

1. Ս. Վ. ամեն զի Տէրը կըսատէ անիծած ամբարտաւանները, իր պատուիրանքներէն մոլորողները : Սաբ. 20. 21 :

Օ. Վ. ամեն զի երկինք ու երկիր պիտի անցնին, բայց Վրիստոսի խօսքերը պիտի չանցնին : Սաբ. 17. 35 :

Չինացոյ Խրատներ :

Պարոնին մէկը՝ որ ծովային ճամբորդութիւնով աշխարհիս բոլորտիքը պտըտեցաւ, աս հետեւեալ պատմութիւնը կը նէ. «Չինացիք զրեթէ ամէն ձեռքերնին ինկածը կուտեն : Վաղաքին փողոցները և շուկաները լեցուն են ամէն օր ծախու թրուջուններ, որոնց քանի մը տեսակները մեր մէջը պատուական սեպուած չեն. ինչպէս՝ բաղէ, բու, արծիւ և արագիլ թուջունները : Շատ ծիծաղական բան մըն է տեսնել մէկ Չինացի մը՝ որ իր ուսին վրայ աւած երկայն ձողին երկու ծայրերը վանդակներ կախուած կան և անոնց մէջը փոխանակ թուջունի՝ շուներ ու կատուներ լեցուած են : Կերևայ թէ իրենց մէջը շատ յարգի է շանը մէկ տեսակը, որ փոքր ու նիհար է : Երբոր աս խեղճերը շուկան կըտանին, իրենց վանդակին մէջը տրտմութեամբ անձայն կընատին, որ ատեն կատուները սուկալի աղաղակներ կըհանեն, իբր թէ իրենց գալու վտանգը գիտնալով : Կատուներուն միսը Չինաստան շատ յարգի է, երբոր աղէկ գիրցուցած են, և շատ անգամ կըտեսնուի :

նուին անոնք հարուստներուն սեղանները :
 Կամանապէս Չինացիք մինեք կը ծախեն ձուղերու վրայ շարած . միներուն մորթը աղէկ մը հանելով ետեւի երկու ոտքերէն փայտի մը կտոր կանցունեն ու անանկ ձողէն վար կը կախեն : Արդարեւ ասանկ շարուած մը կները աղուոր միս մը կերեւան : բայց միայն աղքատները կուտեն զանոնք :

Ս . Գլուսնո շուովմէսդաւան քարոզիչի մը նոր տպուած նամակէն կտունեմք հետեւեալ պատմութիւնը շերամին կերակուրի պէս գործածութեանը վրայ :

«Շատ դարերէ ՚ի վեր է որ (Կաղղիոյ) Հարաւային մշակները՝ շերամը սնուցանելու զբաղած են , բայց չեմ յուսար թէ անոնք երբէք աս որդը իրենց կերակուրի նիւթ մը ընել միտքերնուն անցունեն : Իսկ Չինաստան տյայպէս չէ . աս երկրիս մէջ երկար ժամանակ է որ կը բնակիմ , ու շատ անգամ տեսայ որ կուտեն , և ես ալ կերայ աս որդերէն , ու կը հաստատեմ որ ասիկայ շատ օգտակար է ստամոքսին , միանգամայն ոյժ կուտայ և կը զոգնուի . և մանաւանդ տկար մարդոց աւողջարար կերակուր մըն է :

«Մտաւորները՝ մանեղն ետքը , շերամները կուտեն , ու աղէկ մը կը խորովեն կասկարային վրայ՝ որ բոլորովին ջրային մասէն զտուի , կը կեղտեն զանոնք իրենց պատաստէն՝ որոնք զրեթէ ինք իրեն կեղտն , և կը ընեն զեղնագոյն պղտիկ զանգուածներ , ձուկի կծկուած ձուերուն խիստ նման . և կողովով՝ , ճարպով կամ իւղով կը տապակեն ու վրան քիչ մը մսի ջուր կը բերունեն (վառեակինը՝ շատ աղիւ կը ըլլայ) . հինգ կամ վեց բոպէ եփելէն ետքը՝ փայտէ դըրգալով մը կը մանրեն զանոնք , ու զգուշութեամբ կը խառնեն որ չըլլայ թէ տապակին մէջը քիչ մը մնայ : Բանի մը հակեթի զեղնուց ալ խառնելով՝ զոր օրինակ իրեք հակեթի հարիւր որդի վրան կը լեցունեն , որով կը ձևանայ աղուոր ոսկեգոյն կերակուր մը , և ասիորժելի քրմայ :

«Ահա այսպէս կը պատրաստեն աս կերակուրը :

Երկուրը Չինացոց իշխաններուն ու հարուստ մարդիկներուն համար : Իսկ աղքատները՝ շերամները աղէկ մը խորովելէն ու զանոնք կեղտելէն ետեւ , կողով ու ճարպով կը տապակեն , ու կը համեմեն զանոնք աղով , պղպեղով՝ կամ քացախով , ու ետքը՝ կուտեն բընիձով , զանոնք կեղտելով միայն բաւական համարելով» :

Կարշահար շունչ :

Շունչին գէշութեանը շատ հասարակ պատճառներէն մէկը՝ ակունքներուն ու լինտերուն հոգ չտանելն է , որով ակունքները կը փոխն ու լինտերն ալ շատ կը կակուղանն ու կապուտակ գոյն մը կուենան , և շունչին բանէ մըն ալ շուտ մը կարունիս : Աւտի շունչը մաքուր պահելու համար՝ մարգս պէտք է որ ջրով ստեպ լուանայ իր բերանը , մանաւանդ առաւօտները անկողինէն ելածին պէս ու նաև ամէն անգամ կերակուր ուտելէն ետքը : Ակունքներուն մէջը մտած բաները պէտք է որ զգուշութեամբ հանուի սուր ծայր ունեցող գրիչով կամ աւելի շիւղով մը , և լինտերն ալ պէտք է միշտ շփել ակաւայի վըձիսով մը :

Աւտելու մէջ չափաւորութիւն չգործածելը հասարակօրէն գարշահոտ շունչ մը կը պատճառուի , մանաւանդ երբ որ մտեղէն կերակուրներով կը լեցունեն մարդիկ իրենց ստամոքսը : Աս բանը յայտնի է նաև կենդանեաց վրայ ալ , որ մսակեր կենդանիներուն շատերը գարշահոտ շունչ մը ունին , բայց խոտակերները բոլորովին ազատ են անկից :

Օխտախոր շատ ազու ու տաղտկալի ապականութիւն մը կուտայ շունչին , որուն գործածողները բնաւ խալքսելիք չունին անոր պատճառած գարշահոտութենէն , քանի որ ան սովորութեանը ենթակայ են , թէ և հազարու մէկ զգուշութիւններով բերանին լուան ու մաքրեն :

Կամանապէս քթախոտը նոյն զօրութիւնը ունի շունչի վրայ , մանաւանդ երբ որ շատ կը գործածուի :

Իերնի հոտելուն գլխաւոր պատճառներէն մէկը՝ գիտնուցուող խմելքներ գործածելն է , մինչև անգամ քիչ ըմպելիք գործածելն ալ թէ որ ամէն օր ըլլայ , տակաւին նոյն զօրութիւնը ունին շունչին ապականութեանը վրայ :

Շունչը մաքուր պահելու համար , ամէն օր բաց տեղերը ժուռ գալը աղէկ է ու շատ հարկաւոր : Իարեւախառնութեամբ վարուող երկրագործին մաքուր շունչը՝ բոլորովին ընդհակառակն է հեղգ ու մարմնապաշտ կամ արբեցող քաղաքացիին վնասակար շունչին :

Ան որ ուրիշին դրամով իր աունը կը շինէ , բընաւ յաջողութիւն չձայնելի :

Պարապ մարդը՝ բոլորովին պատրաստ է չար գործելու . աշխատասէր մարդը աս ասիտէն ազատ է :

Պիպեա :

¹ Ի՛նչի գաղտնիք : ² Կապուտ :
³ Թերեւէ ետքը : ⁴ Փնէճ :